

Առ կաթողիկոսն Հայոց Մելքիսեդեկ .

Նորին Տէրութիւնը տեսաւ յօժարութեամբ զՏէր Յովհաննէս աւագերէցն Զուղայի, որ Զեր կողմէ զրկուած էր առ Ս. Գահս . եւ լսեց հոգւոյ մեծազոյն ցաւակցութեամբ այն տառապանքներու եւ հարստահարութիւններու մասին, զորոնք Դուք եւ Զեր ժողովուրդը կը կրէք անհաւատներէն . եւ կը ցաւի որ հռաւորութեան պատճառաւ կարելի պիտի չըլլայ օգնել ձեզ եւ Զուղայի այն պարոններուն, որոնք գրած են նորին Սրբութեան, վերջապէս այն ամէն կաթողիկէ քրիստոնեաներուն, որոնք Զեր կաթողիկոսութեան ներքեւ կը գտնուին, ինչ որ յօժարակամ տեղի պիտի ունենար ի մեծ բաւականութիւն իւր սրտին . որովհետեւ Նորին Սրբութիւնը ուրիշ նպատակ չունի, բայց եթէ օգնել թէ՛ հոգեւորապէս եւ թէ՛ նիւթապէս ուր կրնայ, ոչ միայն ամէն անոնց, որոնք այս Ս. Գահին հաւատացեալներն են, այլ եւ ամէն անոնց, որոնք չունենալով լաւ ուսուցիչներ, չեն հասած այն ճշմարտութեան, որ Պետրոս եւ Պաւլոս սուրբ առաքեալներէն յանձնուած է հռոմէական Եկեղեցւոյ . եւ այսպէս դուրս են ճշմարիտ ճանապարհէն եւ կը խարխափին մոլորութեանց խաւարի մէջ : Ասոնց վրայ ցաւակցութիւն ունենալով Նորին Սրբութիւնը հաստատած է Կարգինալներու ժողով մը, որ կը կոչուի Տարածունի Հաւատոյ, անոր գործն է մասնաւոր հոգ տանիլ ըզրոր ազգերու ամէն մասնաւոր պէտքերն հայթհայթել : Եթէ Զեր Սրբու-